

1.2.2. Գյուղատնտեսություն³

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 44 աշխատանքները (122001-122044 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 28 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով և 10 տեղեկանքներով: Ընդ որում, 28 պետական վիճակագրական հաշվետվություններից 6-ը ամսական պարբերականությամբ են, 4-ը՝ եռամսյակային և 18-ը՝ տարեկան: Հաշվետվություններից 10-ը բուսաբուծության գծով են, 11-ը՝ անասնապահության, իսկ 7-ը գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի են:

Անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն, որի արդյունքները գետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում են ստացել թվով 3 հաշվետվական ձևեր՝ ձև թիվ 1-անտառ (եռամսյակային), ձև թիվ 29-ԳՏ (տարեկան) և ձև թիվ 29-ԳՏ (տարեկան) հավելված ու դրանց լրացման հրահանգներ:

2004թ. իրականացվել է հանրապետությունում առկա բազմամյա տնկարկների համատարած հաշվառում, որի արդյունքների հիման վրա պատրաստվել և հրապարակվել է տեղեկագիր:

«Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր» ծրագրի շրջանակում մշակվել և Շվեդիայից ժամանած փորձագետների հետ համատեղ քննարկվել են համապատասխան հարցաթերթը և դրա լրացման հրահանգը: Նախապես վերը նշված հարցաթերթը անցել է դաշտային փորձաքննություն հանրապետության բոլոր մարզերի 600 գյուղացիական տնտեսություններում:

³Տես՝ Ծրագիր, Հավելված I: